2021

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Որակի ապահովման և կրթության
բարեփոխումների գծով պրոռեկտոր

«ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱ», «ԲՈՒԺԱԿԱՆ ԳՈՐԾ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2017-2018 ուստարի

Կրթական ծրագիր/մասնագիտություն	***Հանձնաժողովի նախագահ***
Բակալավր / «Ստոմատոլոգիա»	բ.գ.թ., դոցենտ՝ Հ.Գասպարյան
Մագիստրատուրա / «Ստոմատոլոգիա»	բ.գ.թ., դոցենտ՝ Հ.Գասպարյան
Մագիստրատուրա /«Բուժական գործ»	բ.գ.դ., պրոֆեսոր՝ Ս.Հովհաննիսյան

2018-2019 ուստարի

Մագիստրատուրա / «Ստոմատոլոգիա»	բ.գ.թ., դոցենտ՝ Մ. Հարությունյան
Մագիստրատուրա /«Բուժական գործ»	բ.գ.դ., պրոֆեսոր՝ Ս.Հովհաննիսյան

2019-2020 ուստարի

Անընդհատ և ինտեգրացված /«Ստոմատոլոգիա»	բ.գ.թ., դոցենտ՝ Մ. Հարությունյան
Մագիստրատուրա /«Ստոմատոլոգիա»	բ.գ.թ., դոցենտ՝ Մ. Հարությունյան

ԱԲՀ-ն կարևորում է կրթության որակի ապահովման գործընթացներում Համալսարանի ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը՝ նպատակ ունենալով նպաստել որակի մշակույթի ձևավորման գործում տարբեր շահակիցների ներդրումներին, նրանց հետ արդյունավետ համագործակցությանը, կառավարման գործընթացներում շահակիցների դերակատարության ավելացմանը և որոշումների կայացման թափանցիկությանը:

Այս առումով Համալսարանում մշակվել և ներդրվել են մեխանիզմներ՝ ապահովելու ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը Որակի ապահովման (ՈԱ) գործընթացներում («Ներքին և արտաքին շահակիցների հետադարձ կապի քաղաքականություն», «Հարցումների անցկացման կանոնակարգեր», սոցիոլոգիական հետազոտության պահանջներին համապատասխան իրականացվող հարցումներ, արդյունքների վերլուծություններ, հանդիպում-քննարկումներ շահակիցների տարբեր խմբերի հետ և այլն):

Որակի ապահովման գործընթացներում արտաքին շահակիցների ներգրավվածության արդյունավետությունը գնահատելու նպատակով ԱԲՀ-ն (որակի ապահովման առաջատար մասնագետը) հավաքագրել և վերլուծել է հետևյալ տեղեկատվությունը՝

2017-2018, 2018-2019 ուստարիների բակալավրի և մագիստրատուրայի, 2019-2020 ուստարվա կրթական ծրագրերի **«Ստոմատոլոգիա», «Բուժական գործ» մասնագիտությունների** ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների վերջին երեք տարիների (2017-2020թթ.) հաշվետվությունները, նրանց՝ ամփոփիչ ատեստավորման, ինչպես նաև մասնագիտությունների կրթական ծրագրերի (ՄԿԾ-ներ) բարելավմանն ուղղված առաջարկությունները և դրանց հիման վրա համապատասխան ստորաբաժանումների, պատասխանատու մարմինների իրականացրած բարելավումները:

Արդյո՞ք արտաքին շահակիցների ներգրավվածությունը արդյունավետ էր, արդյո՞ք այն նպաստել է ուսանող-շրջանավարտների կրթական վերջնարդյունքների անաչառ,

օբյեկտիվ գնահատմանը կամ բարելավման ի՞նչ միջոցառումներ են ձեռնարկվել նրանց առաջարկությունների հիման վրա: Այս և նմանատիպ հարցադրումների օգնությամբ է իրականացվել վերլուծությունը:

Արտաքին շահակիցների ներգրավվածությունը բուհում ապահովվելու մեխանիզմներից մեկն արտահայտվում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում նրանց ընդգրկվածությամբ (Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմի առնվազն 50 տոկոսը պետք է լինեն ոչ տվյալ հաստատության աշխատակիցներ և կարող են ընդգրկվել տվյալ ոլորտի գործատուներ, ակադեմիական հաստատությունների ներկայացուցիչներ), որը հնարավորություն է տալիս բուհին ՄԿԾ-ների արդյունքը գնահատել ատեստավորման հանձնաժողովների եզրակացությունների միջոցով: Նշենք, որ ՄԿԾ-ների գնահատման մեխանիզմներից Համալսարանում կիրառվում են՝ շրջանավարտների շրջանում անցկացվող կրթական ծրագրից բավարարվածության հարցումները, ՄԿԾ-ների արտաքին գնահատումը:

ԱԲՀ-ում ավարտական ամփոփիչ ատեստավորումը կազմակերպվել և անցկացվել է ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգի (2017թ.), Համալսարանում գործող շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգի (2018թ.), Համալսարանում «Հեռավար ուսուցմամբ ուսումնառողների ամփոփիչ գիտելիքների ստուգման և գնահատման ընթացակարգ»-ի (2020թ.) համաձայն:

Ուսումնասիրվել են ավարտական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվությունները, առանձնացվել են հիմնականում բարելավման առաջարկությունները, համեմատվել են նախորդ տարիների հաշվետվությունների հետ, ուսումնասիրվել են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի զեկույցների վերաբերյալ գիտխորհրդի քաղվածքները, ինչպես նաև այդ հաշվետվությունների քննարկման հետ կապված որոշումները և բարելավման քայլերը:

Նախ ներկայացնեք հաշվետվություններում արձանագրված հանձնաժողովի անդամների գոհունակությունը ամփոփիչ ատեստավորման արդյունքների վերաբերյալ:

Այսպես, ամփոփիչ ատեստավորման դիտարկվող հաշվետվություններում արձանագրվել է հետևյալը՝

Ուսանողների տեսական գիտելիքները բավարարում են մասնագիտական որակական պահանջներին:

- Արդյունքները գոհացուցիչ են:
- Ընդհանուր առմամբ գոհ ենք ուսանողների ցուցաբերած գիտելիքներից:
- Համալսարանում ստեղծված են անհրաժեշտ բոլոր պայմանները՝ որակյալ բժիշկ-ստոմատոլոգներ պատրաստելու համար:
- Մագիստրոսների կլինիկական մտածելակերպը շատ ճկուն է, որը հմուտ դասախոսական կազմի և համալսարանի ընձեռած ժամանակակից սարքավորումներով տեխնիկական լաբորատորիայի, ֆանտոմներով հագեցած աշխատանոցների, լսարանների և համալսարանական, և վարձակալած առաջնակարգ կլինիկաների պայմանների շնորհիվ է:

- Շրջանավարտները բուհում ստանում են լիարժեք տեսական և գործնական գիտելիքներ, տիրապետում՝ գործնական հմտությունների:

Նշենք, որ գրեթե նույն դրական կարծիքն է արտահայտված նաև նախորդ տարիների ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվություններում: Ավելին, կարող ենք մեջբերել 2017-2018 ուստարվա հաշվետվությունում արձանագրվածներից հետևյալները՝

- Ուսանողներին դասավանդում են փորձառու մասնագետներ:
- Համալսարանն ունի արդիական սարքավորումներով հագեցած 4 ստոմատոլոգիական կաբինետ, ձեռքի հմտությունների աշխատանոց, տեխնիկական լաբորատորիա:
- Ուսանողներն իրենց պրակտիկան անցկացրել են նաև վարձակալած ստոմատոլոգիական կենտրոններում:
- Մագիստրանտները պրակտիկ աշխատանքներ են կատարել բժիշկների հսկողությամբ:

Առանձնացրել ենք հետևյալ առաջարկությունները 091201.00.7- «Բուժական գործ» մասնագիտության 2017-2018 ուստարվա մագիստրատուրայի կրթական ծրագրով շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքների բարելավման վերաբերյալ.

Մասնագետների պատրաստման որակը բարելավելու համար քննական տոմսերում ընդգրկել իրավիճակային խնդիրներ՝ ըստ առարկաների, որոնք ավելի կընդգծեն ուսանողի կարողություններն ու տեսական գիտելիքները:

091101.00.7- «Ստոմատոլոգիա» մասնագիտության 2017-2018 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրով շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքների բարելավման վերաբերյալ առաջարկությունները հետևյալն են.

- Բակալավրիատի ուսանողների մոտ թույլ է բանավոր խոսքը:
- Առավել ուշադրություն դարձնել ստոմատոլոգիական նյութերի և գործիքների նորարարություններին, քանի որ դրանք ուղղակի կապ ունեն հիվանդությունների ճիշտ ախտորոշման ու բուժման հետ, դրանց լավ տիրապետելը առավել արդյունավետ կդարձնի նրանց աշխատանքը:
- Մագիստրատուրայում առավելագույնս օգտագործել համալսարանի հնարավորությունները՝ գործնական և ձեռքի հմտությունները կատարելագործելու նպատակով:

Ներկայացնենք 091201.00.7- «Բուժական գործ» մասնագիտության 2018-2019 ուստարվա մագիստրատուրայի կրթական ծրագրով շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքների բարելավման վերաբերյալ առաջարկությունները.

Քննություններն անցկացվել են 2 փուլով. յուրաքանչյուր առարկայի բանավոր քննությունից առաջ ուսանողները ցուցադրել են գործնական հմտություններ, կարողություններ և ներկայացրել հիվանդության պատմագիր:

Մասնագետների պատրաստման որակը բարելավելու ուղղությամբ առաջարկվել է՝

- Հիվանդության պատմագրի ներկայացումն իրականացնել վերլուծությամբ և ախտորոշման ու բուժման պատճառահետևանքային կապի հիմնավորմամբ:
- Հմտությունները ներկայացնել ոչ թե տեսական, այլ հիմնավորված, ներկայացնել մանեկենների(մուլյաժների) օգնությամբ:
- Իրավիճակային խնդիրների ներկայացումն իրականացնել ախտորոշման և բուժման պատճառահետևանքային կապի հիմնավորմամբ, հիվանդությունները ներկայացնել նաև կանխարգելման տեսանկյունից, ուշադրություն դարձնել հմտությունների և ունակությունների զարգացմանը:

Առանձնացրել ենք հետևյալ առաջարկությունները 091101.00.7- Ստոմատոլոգիա մասնագիտության 2018-2019 ուստարվա մագիստրատուրայի կրթական ծրագրով շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքների բարելավման վերաբերյալ.

- Օգտվել համալսարանի ընձեռած հնարավորություններից՝ ուսանողների գործնական և ձեռքի հմտությունները կատարելագործելու նպատակով:
- Էլ ավելի արդիականացնել ստոմատոլոգիական սարքավորումներն ու գործիքները, քանի որ դա մեծապես կնպաստի ժամանակակից աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, որակյալ բժիշկ-ստոմատոլոգների պատրաստմանը:

Այսինքն, առաջարկվել է թարմացնել և ուսանողներին ավելի հասանելի դարձնել նյութատեխնիկական բազան:

Ներկայացնենք 091101.00.7- «Ստոմատոլոգիա» մասնագիտության 2019-2020 ուստարվա անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով ու մագիստրատուրայի կրթական ծրագրով շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքների բարելավման վերաբերյալ առաջարկությունները.

Ելնելով հեռավար ուսուցման առանձնահատկություններից՝ 2020թ. յուրաքանչյուր առարկայի ատեստավորումն անցկացվել է մեկ փուլով, բանավոր՝ ընդգրկելով տեսական գիտելիքները և գործնական հմտությունները (տոմսը պարունակել է 2 հարց և 1 իրավիճակային խնդիր): Ուսանողին տրվել է առավելագույնը 20 րոպե ժամանակ (պատրաստվելու և հարցերին պատասխանելու համար): Ելնելով քննության ձևաչափից՝ սահմանափակ էր գործնական հմտությունների ցուցադրումը, սակայն այդ պակասը լրացվել է իրավիճակային խնդիրների վերլուծությամբ և տեսական հարցի ներկայացմամբ: Առաջարկվել է՝

- հետագայում իրավիճակային խնդիրները կազմելիս ուշադրություն դարձնել նաև հիվանդությունների կանխարգելման հարցերին, ախտորոշմանը, հետազոտման բոլոր պարակլինիկական եղանակներին:
- Տոմսերում և իրավիճակային խնդիրներում ավելի շատ ներառել օրթոդոնտիան՝ նկատի ունենալով նրա դերը ժամանակակից ստոմատոլոգիայում:

Այսինքն, կարևորվել է հեռավար ձևաչափով կրթական վերջնարդյունքները գնահատելիս իրավիճակային խնդիրների բովանդակության վերանայումը, ինչն էլ ենթադրում է առարկայի դասավանդման գործընթացում դասավանդման և ուսում-նառության համապատասխան մեթոդների ընտրություն:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով, չնայած ուսումնասիրվել են տարբեր կրթական ծրագրերով (բակալավրիատ, մագիստրատուրա, անընդհատ և ինտեգրացված) իրականացվող ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվությունները, այնուամենայնիվ նպատակը եղել է նույնը՝ պարզել և գնահատել արտաքին շահակիցների ներգրավվածության արդյունավետությունը որակի ապահովման գործընթացներում:

Ընդհանրացնելով՝ կարող ենք ասել, որ ԱԲՀ–ի վերջին 4 տարիների ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների գնահատմամբ շրջանավարտները պատշաճ մակարդակով տիրապետում են այն մասնագիտական գիտելիքներին և հմտություններին, որոնք նախատեսված են եղել տվյալ կրթական ծրագրով:

Ուսումնասիրություններից պարզ է դարձել, որ ըստ տարիների հետևողական աշխատանքներ են իրականացվել ավարտական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների խորհրդատվությունների, առաջարկությունների հիման վրա: Չնայած պետք է փաստենք, որ դիտարկվող ժամանակահատվածում գիտխորհրդում ներկայացված այդ հաշվետվություններն ընդունվել են ի գիտություն, և բարելավման առաջարկությունների վերաբերյալ չի կայացվել որևէ որոշում, ըստ որի հստակ կներկայացվեին պլանավորվող, իրականացվելիք գործողությունները, կսահմանվեին ժամկետներ, պատասխանատուներ, այնուհանդերձ, Համալսարանը չի անտեսել արտաքին շահակիցների՝ ոլորտի փորձառու մասնագետների կարծիքը, ինչպես նաև, ելնելով իր առաքելությունից ու առանձնահատկություններից, կարողացել է ժամանակին իրականացնել հետևյալ բարելավումները՝

- Տարեցտարի բարելավվել է Համալսարանի նյութատեխնիկական բազան, ձեռք են բերվել ՄԿԾ-ների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ սարքավորումներ, վիրաբուժական գործիքներ, լաբորատոր կշեռքներ, ուսումնական մուլյաժներ, ստոմատոլոգիական նյութեր, լաբորատոր փորձերի առնետներ և այլն:
  Հիմք՝ տնտեսական մասի 2017-2018, 2018-2019, 2019-2020 ուստարիների հաշվետվություններ:
- Խորհրդատվության համաձայն, 2017-2018 ուստարուց սկսած, ներառվել են իրավիճակային խնդիրներ քննական տոմսերում, որոնք պարբերաբար վերանայվել են:
- 2019-2020թթ. ՄԿԾ-ների վերանայման արդյունքում քարտեզագրման միջոցով ապահովվել է դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների կապը կրթական վերջնարդյունքների հետ:
- Վերանայվել են առարկայական ծրագրերը՝ նույնպես ապահովելով դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների համապատասխանությունը դասընթացի ակնկալվող վերջնարդյունքներին:
- Ընթացքի մեջ են հեռավար ձևաչափով 2020-2021 ուստարվա ամփոփիչ ատեստավորման հարցաշարերում ներառվող իրավիճակային խնդիրների վերանայումը:

Այնուամենայնիվ, անհրաժեշտ է պատասխանատու մարմինների (ամբիոնի վարիչներ, Ուսումնական մաս) ուշադրության կենտրոնում պահել հետևյալ հարցերի պատասխանները՝

- Ինչպե՞ս և ո՞վ է որոշում, թե ի՞նչ գործողություններ է պետք ձեռնարկել ամփոփիչ ատեստավորման հաշվետվության եզրակացությունների ու առաջարկությունների հիման վրա:
- Ո՞վ է մասնակցում այդ գործընթացին:
- Մշակվո՞ւմ է գործողությունների ծրագիր դրանց հիման վրա:
- Պլանավորված գործողությունները ո՞ւմ հետ են քննարկվում: Ինչպե՞ս է լուսաբանվում գործողությունների ընթացքը:
- Ո՞վ է հետևում գործողություններն իրականացվել են, թե՞ ոչ, որքանո՞վ են արդյունավետ եղել:

Հետևողական աշխատանքների արդյունքները հիմք են հանդիսանում մասնագիտությունների կրթական ծրագրերի վերանայման գործընթացում պատշաճ որոշումներ կայացնելիս:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շրջանավարտների ավարտական ատեստավորման գնահատականները, որոնք ներկայացվում են ատեստավորման հանձնաժողովների կողմից, տվյալ բուհի գործունեության արդյունավետության առանցքային ցուցանիշներից են: Այդ գնահատականները յուրովի արժևորում են բուհի ղեկավարության, սպասարկող ողջ անձնակազմի գործունեությունը, ֆակուլտետների ու մասնագիտական ամբիոնների, դասավանդող դասախոսների գործադրած ջանքերը:

<u>Ըստ այդ հաշվետվությունների վերլուծության արդյունքների՝ առաջարկվում է.</u>

1. Խուսափել նախորդ տարիների հաշվետվությունների կրկնություններից:
2. Տալ ժամանակ շահագրգիռ մարմիններին խորհրդատվությունների, առաջարկությունների հիման վրա մշակելու և հետևողականորեն իրականացնելու գործողությունների ծրագիր՝ վերհանված խնդիրները շտկելու նպատակով:
3. Իրականացնել պարտականությունների հստակ բաշխում:

   Այս ամենը կարող են հիմք հանդիսանալ ուսումնառության կազմակերպման շահախնդիր կողմերի հետ քննարկելու և ընթացիկ ուսումնական տարվա աշխատանքները բարելավելուն ուղղված կոնկրետ միջոցառումներ մշակելու համար: